

ԿՈՐԾԱՆԻՉ ՄՈԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Ոչ-բժշկական նպատակներով թմրեցուցիչ դեղերուն յաճախակի գործածութիւնը, մարդկային ընկերութիւնը հարուածող, քանդող մոլութիւններուն ամէնէն սարսափելիներէն է:

Մարդիկ հինուց ի վեր ծանօթ էին կարգ մը բոյսերու կամ անոնց հիւթերուն թմրեցուցիչ յատկութիւններուն: Աֆիոնի եւ հաշիշի գործածութեան սկիզբը դարերու մթութեան մէջ կը կորսուի. իսկ 19-րդ դարուն վերջերը քիմիական յառաջդիմութիւններով ձեռք բերուած թմրեցուցիչներէն քոքայինի, մորֆինի, հէրոյինի կայլն դեղերու գործածութիւնը, իբր հաճոյքի միջոց, սա վերջին քսան-երեսուն տարուան ընթացքին աներեւակայելի կերպով տարածեցաւ մարդկային ընկերութեան ամէն խաւերուն մէջ:

Քանի՜ քանիներ փռացած են այդ մոլութեանց երեսէն, որքա՛ն ոճիրներու ծնունդ տուած են այդ մոլութիւնները, թուելը երկար պիտի ըլլար:

Մենք պիտի բաւականանանք սեղմ գիծերով պատկերացնել թմրեցուցիչ դեղերու (աֆիոնի, հաշիշի, քոքայինի, մորֆինի, հերոյինի կայլն) մոլութեանց մարդկային մարմինն և մտքին վրայ գործածած աւերները, յուսալով որ մեր երիտասարդութիւնը, տեղեկանալով այդ վատ մոլութեանց կործանարար հետեւանքները, հեռու կը մնայ անոնց անձնատուր ըլլալու փորձութենէն:

Թմրեցուցիչները առհասարակ ամէնքն ալ զօրաւոր թոյներ են, անոնք կը թունաւորեն գործածողին ոչ միայն մարմինը, այլ և հոգին:

Թմրեցուցիչներու մոլին ամէն բանէ առաջ իր կամքը կը կորսնցնէ: Ան հրամայական սովորութեան մը գերին կ'ըլլայ: Անոր քով ազնիւ զգացումներ փնտռելու չէ այլեւս, մէկ խօսքով կ'անբանանայ: Եթէ ընտանիքի հայր է, կը մոռնայ իր կիներ եւ զաւակները, կատարեալ անտարբերութեամբ կը վերաբերուի իր գործին հանդէպ:

Թմրեցուցիչներու մոլիները շուտով կ'անբարոյականանան, իրենց համար ուրիշ սրբութիւն գոյութիւն չունենար, անոնք թմրեցուցիչը հայթափելու համար չեն վարանիր գողութիւն, նոյնիսկ մարդասպանութիւն ընելու:

Թմրեցուցիչներու մոլին, Թմրեցուցիչներէն ոեւէ մէկը գործածել սկսած օրէն, ախորժակը կը կորսնցնէ, դժուար մարսողութեանց ենթակայ կ'ըլլայ, մարած աչքերով, տժգոյն, իր շուրջի անցուղարձին անտարբեր, անբանի արտայայտութեամբ, ան կը զատորոշուի ամէն տեղ: Անոր դիմագիծը կը մատնէ թէ ան իջած է արդէն անասնային աստիճանի մը:

Թմրեցուցիչի մոլին չ'ուշանար իր առնականութիւնը կորսնցնելէ, շատ անգամ կը ցանկայ հակաբնական վատ արարքներու ենթակուիլ, հրաւիրելով իր վրայ ամէնքին զգուանքը և արհամարհանքը:

Աֆրոնամոլները, հաշիշամոլները և մորֆինամոլները՝ թոյնը ընդունելէն քիչ վերջ թէեւ ընդհանուր լաուութիւն մը, բարօրութիւն մը կը զգան, բայց հակահարուածը չուշանար, անոր կը յաջորդեն մարմնի թուլացումը, զգայագրկութիւնը եւ մոլիին բորբոքած երեւակայութիւնը. մտայլ կամ զուարթ երազատեսի դիմագիծերը շուտով կ'եղծանին՝ երեսի գոյնին այլափոխմամբ:

Իսկ քոքայինամոլին մօտ, սկիզբը, ուղեղային գրգռում մը կը նշմարուի, որուն կը յաջորդէ մտային անցողակի պայծառութիւն մը, զնգերներու կարճատեւ դիւրաշարժութիւն մը, վայրկեանական ընդհանուր կորով մը: Բայց հոս ալ թոյնի աւերիչ յատկութիւնը իր գոյութիւնը զգացնել չուշանար, ենթակային ուժերը կը սպառին, սիրտը ուժգին կը բարախէ, ի վերջոյ կը զգետնուի:

Թմրեցուցիչներու մոլիները թոքախտի առաջնակարգ ենթականեր են, անոնց առողջութիւնը շուտով կը քայքայուի, միշտ թշուառ, արգահատելի կեանքով մը կը քաշկոտեն իրենց գոյութիւնը:

Այս մոլութիւններուն կործանարար հետեւանքները նկատողութեան առնելով, քաղաքակրթուած երկիրներու կառավարութիւնները 1925-էն ի վեր խիստ հսկողութեան տակ առած են Թմրեցուցիչ դեղերու առեւտուրը: Բայց եւ այնպէս բազմաթիւ անխիղճ չահամոլներ չեն զազրիւր այս թոյներուն գործածութիւնը տարածելէ, որոնց ծուղակներէն կը զգուշացնենք մեր ընթերցողները եւ մանաւանդ մեր բանտը երիտասարդութիւնը:

Աթէնք

ԲԺ. Գ. Օ. ԳԱՆՈՒՄՏԵԱՆ